

ՆԻԿՈՒԱ ՅՈՐԳԱՆ ԵՎ ՆՐԱ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Ս. Է. ԲՈՒԱՆՋՅԱՆ

Հրացավ պատմագիտության մեծագույն ներկայացուցիչներից մեկի՝ ռուսին ժողովրդի փառապանծ զավակ, խոշոր արևելագետ, հայագիտության երախտավոր Նիկոլա Յորգայի ծննդյան հարյուրամյակը:

Յորգայի մասին առ այսօր տարբեր լեզուներով հրատարակվել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Նրա տպագիր երկերի ոչ լրիվ մատենագիտությունը, կազմված նրա անձնական քարտուղար Բարբու Թեոդորեսկուի կողմից, բաղկացած է երեք ստվար հատորներից: Նրա կենդանության օրոք հրատարակված գրքերի քանակը անցնում է 1250-ից, իսկ հոգվածներին՝ 25.000-ից՝ չհաշված վերջին տարիներին ռուսական ակադեմիայի Յորգայի անվան պատմության ինստիտուտի և այլ հրատարակչությունների, ինչպես նաև արտասահմանյան երկրներում լույս տեսած գործերը:

Նիկոլա Յորգան ծնվել է 1871 թ. հունիսի 18-ին, Ռումինիայի Բոտոշան քաղաքում, մտավորականի ընտանիքում: Նա հազիվ 5 տարեկան էր, երբ մահացավ հայրը: Տասներեքամյա Յորգան սկսեց հոգվածներ գրել և հրապարակել «Ռումլնուլ» թերթում: Ընդունվելով Յաշի համալսարանը, ի զարմանս բոլորի, այն ավարտեց մեկ տարում: Այդ ժամանակ նա արդեն տիրապետում էր դասական և եվրոպական մի շարք լեզուների: Նա գիտահետազոտական ճանապարհորդություններ է կատարում Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և Անգլիայում: Ն. Յորգան Ֆրանսիայում 1891—1893 թթ. անվանի դեկավար դասախոսների ձեռքի տակ հիմնավորապես թրծվում է իբրև համաշխարհային պատմության մասնագետ: Նա արտասովոր կարողություններ գուլգրենթացաբար տիրապետում է 17-ից ավելի հին ու նոր լեզուների: Գերմանիայում ևս խորանում է գիտության մեջ: Ն. Յորգան Փարիզի և Լայպցիգի համալսարանում և խստապահանջ երկու ուսումնական բարձրագույն հաստատություններին է ներկայացնում և փայլուն կերպով պաշտպանում իր ավարտաճառերը, որոնք էլ երկու համարժեք դիպլոմների են արժանացնում Նրան: Հազիվ 22 տարեկան էր նա, երբ ստացավ փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան: Այդ շրջանում էլ Ն. Յորգան հրավիրվում է աշխատակցելու Ֆրանսիական մեծ հանրագիտարանին, ինչպես նաև Ֆրանսիական մի շարք պարբերականներին:

Գերմանական համալսարանի նշանավոր գիտնական պրոֆեսորները Լամբրեխտի զլխավորությամբ Յորգային էին վստահում գրելու (գերմաներեն) «Ռումինացիների պատմությունը» (երկու հատոր) և «Օսմանյան կայսրության պատմությունը» (5 հատոր), իսկ լոնդոնում հրատարակվում է նրա

* Այսուհետև «Լրաբերում» պարբերաբար կհրատարակվեն հոգված-ուսումնասիրություններ՝ նվիրված հայազգի և օտարազգի անվանի հայագետներին՝ հեղինակների հայագիտական հետազոտությունների մատենագիտությամբ հանդերձ:

«Բյուզանդական կայսրության պատմությունը» (անգլերեն) ուսումնասիրությունը: Այս բոլորը՝ նրա «Ֆիլիպ դ'Մեզիեր» և «Թոմաս III» ֆրանսերենով և գերմաներենով գրված ավարտաճառերի հրատարակությամբ, կարևոր անձնագիր հանդիսացան հեղինակի համար մուտք գործելու աշխարհի մեծագույն պատմաբանների շարքը:

Յորգան ամենից առաջ համաշխարհային աղբյուրագիտության մեծագույն ներկայացուցիչներից էր: Նա պրպտելով եվրոպական մի քանի տասնյակ քաղաքների ու մշակութային կենտրոնների արխիվները, հասավ այն ճիշտ եզրակացության, որ առանց հայտնաբերելու, վերծանելու և հրատարակելու սփռված հազարավոր վավերագրերը՝ անկարելի է գրել որևէ ժողովրդի ամբողջական գիտական պատմությունը: Երկար տարիների վիթխարի աշխատանքի շնորհիվ նա կարողացավ հայտնաբերել, վերծանել և երբեմն էլ դրանք թարգմանելով (լատիներենից և հունարենից) տպագրության հանձնել այնքան վավերաթուղթ, որը գիտնականների մի քանի սերնդի գործ կարելի է համարել: Յորգան հրատարակել է շուրջ երեսուն հազար փաստաթուղթ՝ ամփոփված 16.291 էջերում, չհաշված դրանց առնչվող ծավալուն ուսումնասիրությունները: Այդ վավերագրերը տարբեր ժողովածուների շարքեր են. դրանցից հիշենք միայն երկուսը. «Ուսումնասիրություններ և փաստաթղթեր» (31 հատոր), «Նոթեր և քաղվածքներ խաչակիրների պատմության վերաբերյալ» (6 հատոր): Հիշյալ շարքերից բացի Յորգան հրատարակել է նաև մեծ թվով ձեռագրական նյութեր, անհատական արխիվներ, վիմական արձանագրություններ և այլն:

Հիշատակվածներից բացի՝ համաշխարհային պատմությանն են վերաբերում հարյուրավոր այլ հատորներ, որոնցից հիշենք միայն «Համադրական փորձ մարդկության պատմության» (4 հատոր), Բյուզանդիայի պատմության նվիրված նրա մենագրությունները, Բալկանյան պետությունների, ինչպես նաև Բալկանյան պատերազմին վերաբերող հատորները, եվրոպական մի շարք ժողովուրդների պատմությանը նվիրված գործերը և այլն: Նա միաժամանակ ռումին ժողովրդի պատմության և գրականության պատմության մեծանուն հետազոտողն է: Այս բնագավառում ուշագրավ են նրա «Ռումին ժողովրդի պատմություն» (11 հատոր), «Ռումին ժողովրդի պատմությունը ըստ ուղևորների տվյալների» (4 հատոր), «Ռումին դրականության պատմություն» (10 հատոր), «Ռումինական առևտրի պատմություն» (2 հատոր), «Ռումինական բանակի պատմություն», «Ռումինական դպրոցի պատմություն», «Ռումինական մամուլի պատմություն», «Քրիստոսոստի պատմություն», «Ռումինիայի անկախության պատերազմը» և այլ հետազոտությունները: Ն. Յորգայի գրչին են պատկանում ռումինական հին, մանր և ժողովրդական արվեստներին, նշանավոր դեմքերին նվիրված ուսումնասիրություններ, որոնք տիտանական աշխատանքի արդյունք են: Նրա ուսուցիչ և բարոյապես հովանավորող՝ ռումինացի նշանավոր պատմաբան Ա. Դ. Փսենոփոլը նկատի ունենալով Ն. Յորգայի միայն երիտասարդական հասակում գրած աշխատությունները գրել է. «Ինչպես կարողացավ մի ուղեղ մտածել այդ բոլորը և մի ձեռք գրել դրանք»¹:

Ն. Յորգան հազիվ 26 տարեկան էր, երբ ընտրվեց ռումինական ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 30 տարեկանում՝ իսկական անդամ:

¹ S#- Barbu Theodorescu, Nicolae Iorga, București, 1968, p. 265.

Ն. Յորգան ռումին ժողովրդի հանրագիտարանային բնույթի գիտական բազմաթիվ հանդեսների հիմնադիրն էր ու խմբագիր-հրատարակիչը: Դրանցից են «Պատմական հանդես» ամսագիրը (ռումիներեն և ֆրանսերեն 1915—1940), «Հարավ-արևելյան Եվրոպայի պատմական հանդես» (եռամսյա, ֆրանսերեն 1924—1940), «Ռումինիայի պատմական հուշարձանների հանդեսը» (ռումիներեն) և այլն:

Նիկոլա Յորգան 23 տարեկանից սկսած մոտ կես դար դասավանդել է Բուխարեստի պետական համալսարանում և խոշոր ծառայություններ մատուցել երկրում պատմաբան-մասնագետների աճեցնելու գործում: Եղել է Բուխարեստի համալսարանի ռեկտորը, միաժամանակ վարելով նաև մի շարք գիտական հաստատությունների տնօրենի պաշտոնները: Յորգան Ռումինիայի պատմական հուշարձանների հանձնաժողովի նախագահն էր, Հարավ-արևելյան Եվրոպայի ուսմանց խորհրդի տնօրենը, Ֆրանսիայի ռումինական դպրոցի տնօրենը, Բյուզանդագիտական ինստիտուտի տնօրենը, Համաշխարհային պատմության ուսումնասիրության ինստիտուտի տնօրենը և այլն: Նա Ռումինիան ներկայացրել է համաշխարհային բազմաթիվ գիտական ժողովներում: 1924 թ. Բուխարեստում նախաձեռնել է բյուզանդագետների առաջին համաշխարհային համաժողովը և ընտրվել նրա նախագահը: Շուտով Փարիզի վիմագրության ակադեմիան Յորգային է վստահում Բելգրադի բյուզանդագետների համաշխարհային համաժողովում իրենց ներկայացնելու պատիվը: Օժտված լինելով նաև հոետորի բացառիկ տաղանդով, Յորգան հաճախ է հրավիրվել դասախոսություններ կարդալու Եվրոպայի գրեթե բոլոր երկրների գիտական հաստատություններում:

Յորգան մեծապես նպաստել է ռումին ժողովրդի վերաարթնացմանը և դարձել նրա վերամիավորման հույզերի և մտորումների մեծ արտահայտիչներից մեկը: Նա միաժամանակ մեծ դեր է խաղացել ռումին ժողովրդին մարդկությանը ճանաչելի դարձնելու գործում:

Յորգայի անունը սերտորեն կապված է նաև ռումինական լրագրության պատմության հետ: Նա 1910—1940 թթ. հրատարակել է «Ռումինական ժողովուրդը» օրաթերթը, և գրական մի շարք պարբերականներ: Յորգան միաժամանակ բանաստեղծ էր, արձակագիր, հայտնի պարսավագրող (պամֆլետիստ), նա հեղինակ է նաև 40-ից ավելի պատմական թատերախաղերի: Նա թողել է նաև հուշագրությունների հատորներ, որոնք արժեքավոր են մարդկության նորագույն պատմության ուսումնասիրման համար:

Յորգան բազմաթիվ թարգմանություններ է կատարել Կոլտոնիից, էսքիլ-լեսից, ինչպես նաև բանաստեղծություններ և պատմվածքներ՝ զանազան լեզուներից:

Յորգան նաև քաղաքական և պետական գործիչ էր: Նա ընտրվել է ժեռակուտական, պատգամավորների պալատի նախագահ, եղել է լուսավորության և մշակույթի մինիստր և կարճ ժամանակով նաև երկրի վարչապետ (պրեմիեր-մինիստր 1931—1932): Յորգան միշտ մնաց իր ժողովրդի կողքին, դարձավ նրա մեծ լուսավորիչը: Ռումին գյուղացիության նկատմամբ երկրում տիրող բուրժուա-կալվածատիրական կարգերի կողմից կազմակերպված մահացու ոճրի ժամանակ, Ռումինիայի բոլոր մտավորականներից ավելի հնչեց Յորգայի բողոքի ձայնը իշխող կարգերի դեմ: 1910 թ. սկսում է հրատարակել

նաև «Ռուսիական ժողովուրդը ժողովրդի համար» թերթը և օրացույցների շարքը:

Մեծ է Ն. Յորգայի դերը Ռուսիայի վերամիավորումից առաջ երկրի տարբեր մասերի ռուսիացիներին և այլ ժողովուրդներին միմյանց հետ բարեկամացնելու գործում: Բավական է այս առթիվ միայն հիշատակել նրա հիմնադրած Վրլեն դե Մունտեի ժողովրդական համալսարանը, որը այնուհետև կոչվեց նրա անվամբ, ուր նա իր, ինչպես նաև իր հրավիրած ռուսիացի և օտար անվանի գիտնականների դասախոսությունների շնորհիվ նոր լիցք հաղորդեց մանկավարժներին: Դարձյալ Յորգան էր, որ գյուղը լուսավորելու մտադրությամբ հիմնադրեց Մշակութային լիգան, «Սերմնացան» ժողովրդական-դրական հանդեսն ու գրադարանը՝ վերջինիս նվիրելով իր անձնական հավաքածոներից տասը հազար հատորներ և այլն:

Յորգայի անունը հռչակվեց ամենուր—Նվրոպայի տասնյակ երկրների համալսարաններ և ակադեմիաներ պատիվ համարեցին Ն. Յորգային շնորհելու դոկտոր հոնորիս կառուս և կամ ակադեմիայի թղթակից-անդամի պատվավոր կոչումներ: Նրա անունով կոչվեցին մի շարք փողոցներ:

Մեծ հայրենասերն ու մեծ մարդասերը դառնությամբ էր տեսնում, որ ֆաշիզմը սողոսկում է նաև իր երկրից ներս: Յորգան իր հրատարակած մեծ թվով հոդվածներով զգուշացնում էր իր ժողովրդին՝ նրան սպառնացող մոտալուտ վտանգի մասին: Նա միաժամանակ ազդարարում էր, որ ֆաշիզմը ոչ մի ապագա չի կարող ունենալ «մարդկությունը չի հանդուրժելու այդ ուժերը»: Նա կարող էր հանգիստ փրկել իր կյանքը՝ անցնելով ցանկացած երկիր: Սակայն մեծ հայրենասերն ու քաղաքացին ուխտեց երբեք չլքել իր ժողովրդին: 1940 թ. նոյեմբերի 26-ին ֆաշիստական սև ուժերը խլեցին նրան իր աշխատանքային սեղանից, երբ նա վիթխարի ուժով աշխատում էր իր տասը հատորանոց գլուխգործոցի՝ «Մարդկության պատմության» ամբողջացման վրա և որի առաջին հատորը՝ «Պատմագրությունը» նոր էր ավարտել: Յորգայի շարանենգ ապանությունից հետո նրա գրասեղանի վրայից գտնվեց մի օր առաջ իր կողմից գրված մի քերթված՝ «Մեր եղևին» խորագրով, ուր նախազգալով իր մոտալուտ վախճանը մեծանուն գիտնականը դառնորեն նշում էր ծեր եղևնու արմատից կտրվելու մասին, որի միակ մեղքը այն էր, որ կյանքի տաժանքի օրերին բոլորը պատսպարվել էին նրա հովանու տակ:

Մեծ մարդասերը խոր հարգանք էր տածում դեպի փոքր ժողովուրդները: Ըստ նրա՝ մի ժողովրդի արժանիքը ոչ մի կապ չէր կարող ունենալ նրա բնակչության թվի, երկրի մեծության և կամ միջազգային ասպարեզում գրաված դիրքի հետ: Այս հարցում Յորգայի համար որոշիչը ու մնայունը տվյալ ժողովրդի ստեղծած հոգեկան արժանիքներն էին և նրա մատուցած ծառայությունները համաշխարհային մշակույթի գանձարանը հարստացնելու գործում: Յորգան այդ առումով ամենից առաջ մեծագույն հայասեր էր: Նրա ծննդավայր Բոտոշան քաղաքը դեռևս XIV դ. հայկական խոշոր կենտրոն էր, հայերը կարևոր դեր էին խաղում քաղաքի զարգացման գործում: Յորգայի մանկության և ուսումնառության ընկերներից շատերը հայեր են եղել: Հետագայում, Յորգան աղբյուրագիտական տիտանական գործունեությամբ ի հայտ բերեց վեց դար շարունակ ռուսիահայերի ծավալած գործունեության լուսավոր հետքերը, իսկ համաշխարհային պատմության ստեղծման ուղղությամբ իր կա-

տարած հետազոտությունների ընթացքում զբաղվեց նաև հայ ժողովրդի, նրա մշակույթի պատմության հարցերով:

Ռումինիան, ինչպես հայտնի է, հայագիտական ուսումնասիրությունների բնագավառում ունի հարուստ ավանդույթներ: Յորգայից առաջ և հետո եղել են Ռումին և հայագրի գիտնականներ, որոնք մեծ սիրով ուսումնասիրել են հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը: Սակայն Յորգայի մեծագույն առավելությունը այն էր, որ նա հիմնովին ճանաչեց մեր ժողովրդին: Նա ոչ միայն մեր պատմական անցյալի հիանալի գիտակ էր, այլ նաև մոտիկից հաղորդակից եղավ մեր ներկային: Առաջին համաշխարհային պատերազմի օրերին, երբ Ռումինիայի հարավային մասը թշնամին գրավել էր և ժողովուրդը ապաստանել էր Յաջ քաղաքում, այդտեղ էլ Յորգան լսեց հայ ժողովրդին վիճակված ողբերգության մասին և իր ժողովրդի համար այդ ծանր օրերին մամուլում պարսավեց հայ ժողովրդի դահիճներին: Նա իր գիտական շրջագայությունների ժամանակ մոտիկից հաղորդակից եղավ նաև հայ ժողովրդի աստանդական բեկորներին և պաշտպան կանգնեց Եվրոպական խարդախ դիվանագիտության անիրաված հայկական դատին և հավատք ներշնչեց հայոց լավագույն ապագայի նկատմամբ: Յորգան չբավարարվեց միայն ինքն ուսումնասիրելով մեր ժողովրդի պատմությունը, այլև ոգևորեց և մղում տվեց իր ընկերներին ու աշակերտներին՝ զբաղվելու հայագիտությամբ: Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ Յորգան իր հեղինակությամբ և դիրքով մեծ համակրություն ստեղծեց Ռումին և օտար մտավորականության մեջ՝ ի նպաստ հայ ժողովրդի:

Յորգայի առաջին հայագիտական աշխատությունը «Հայերը և Ռումինները. պատմական մի զուգակշիռ» գործն է, որը լույս է տեսել Ռումիներեն (1913 և 1914) և ֆրանսերեն (1913): Այստեղ է, որ հեղինակը նախ նմանություններ է գտնում հայ և Ռումին ժողովրդի պատմական ճակատագրում և ապա ուրվագծում Հայաստանի տարբեր ժամանակաշրջանների, հայ գաղթավայրերի կազմավորման և հատկապես Ռումինահայ գաղութի հակիրճ պատմությունը: Յորգան հատկապես կանգ է առնում Ռումինիայի տնտեսական և մշակութային կյանքում հայերի խաղացած դերի վրա: Այն գրված է ավելի քան 300 աղբյուրների և գրականության հիման վրա և իր ժամանակի համար եզակի գործ է:

1929 թ. Բուխարեստում լույս տեսած Յորգայի մի այլ գրքում ամփոփված են նրա երկու հայագիտական աշխատությունները: Դրանցից առաջինը՝ «Զորս դասախոսություններ Հայաստանի մասին» հրատարակվել է Ռումիներեն: Դրանք Յորգայի ելույթներն են Բուխարեստի Ազգային թատրոնի բեմից հայ հողի, ցեղի, պատմության, գրականության և արվեստի մասին: Այդ գրքույկը իրականում հայ ժողովրդի սեղմ պատմությունն էր հին ժամանակներից մինչև նորագույն շրջանը: Յորգան Նդեռնը համարում էր «ժամանակակից քաղաքական կյանքի ամենաակա արատը»², Հայ ժողովրդի նկատմամբ ցույց տրված անտարբերությունը նկատի ունենալով նա նշում էր, որ «Դեռ հավակնություն ունենք, ասելու, թե քաղաքակրթ մի դարում ենք ապրում»³: Ի վերջո՝ Յորգան նկատի ունենալով հայ ժողովրդի ստեղծած հոգեկան ար-

² N. I o r g a, Patru conferinți despre Armenia, București, 1929 p. 15.

³ Նույն տեղում, էջ 40:

ժեքներն ու ապրելու անխորտակելի կամքը՝ եզրակացնում էր. «Մի դժբախտ ժողովուրդ, մի ժողովուրդ, որը շատ է տառապել, շատ սպասելիքներ ունի ապագայից: Մաղթում ենք հայ ժողովրդին պսակումը իր իղձերին, որին նա արժանի է այն նպաստին համար, որ նա բերեց մարդկության քաղաքակրթությանը»⁴:

Հիշյալ գրքում ամփոփված նրա երկրորդ հայագիտական աշխատությունը՝ «Հայերը Ռումինիայում» Նուպարյան մատենադարանում իր պատվին կազմակերպված ընդունելության առթիվ հեղինակի ելույթն է, Սորբոնում Կիլիկյան Հայաստանի պատմության շո-րշ իր կարդացած դասախոսություններից ամփջապես հետո: Այն լույս է տեսել Ֆրանսերեն: Ռումինահայերի սեղմ պատմությունը տալուց հետո նա կատարում է շատ կարևոր եզրահանգումներ, որոնցից մեկը Մուղդվա հաստատված առաջին հայ գաղթականների ճանապարհի որոշումն էր: Մինչ այդ ենթադրվում էր, որ այժմյան Ռումինիայի առաջին հայերը գաղթել են ուղղակի Լվովից, այնինչ Յորգան պարզեց, որ առաջին գաղթողները Կաֆայից (Ղրիմ) էին եկել և հետագայում են Ռումինիա եկել նաև Լվովի ճանապարհով: Երկրորդ կարևոր եզրակացությունը վերաբերում էր Մուղդվայի հայերի վաղեմիությանը: Նա կարողացավ հաստատել, որ առաջին հայերը Մուղդվայում ոտք էին դրել դեռևս իշխանապետության ստեղծումից էլ առաջ և հետևաբար նրանք հրավիրված գաղթականներ չէին, այլ Մուղդվայի ազգային պետության ստեղծման մասնակիցներ: Բոտոշանի մասին իր հուշերում նա նշում էր հայերի խաղացած կարևոր դերը այն փոքր ավանից քաղաքի վերածելու գործում: Միաժամանակ նա իր հիացմունքն էր հայտնում դեռևս XV դ. այնտեղ ապրող հայ գերդաստանների մասին, որոնք սրբությունք պահպանում էին իրենց հայրենի զամայելի սովորությունները: «Ռումինիայի հայերը կարողացան մեծ հմտությամբ զուգակցել երկու դժվարին պարտականություններ՝ մեկը հավատարմությունը դեպի հայրենիքն ու հայրենի ավանդությունները, մյուսը սերն ու հարգանքը դեպի իրենց հյուրընկալող երկիրն ու ժողովուրդը: Մեր ազնիվ եղբայրները լինելով հանդերձ, — նշում է Յորգան, — հայերը միաժամանակ մնացին իրենց հնագույն հայրենիքի ընտրյալ որդիները»⁵:

1930 թ. Փարիզում Ֆրանսերեն լույս տեսավ Յորգայի հայագիտական մեկ այլ կարևոր աշխատությունը «Փոքր Հայաստանի համառոտ պատմություն» կամ «Կիլիկյան Հայաստան», ուր ամփոփված էին 1929 թ. հունվարին Սորբոնում կարդացած երեք դասախոսությունները և այլ հավելումներ: Նրա մասին Ֆրանսիական քննադատությունը ափսոսանք էր հայտնում, որ այն տաս տարով ուշ է լույս տեսել, անկասկած ակնարկելով այն իրողությունը, որ նրա ընթերցումը գուցե ազդեցություն ունենար հայկական դատը վրձնողների վրա: Այստեղ ցույց էր տրվում, որ Բյուզանդիան ոչ մի դեր չի ունեցել Կիլիկյան հայկական պետության ստեղծման գործում և որ հայկական պետությունը կարևոր դեր է խաղացել խաչակիրների կյանքում:

Յորգայի հայագիտական աշխատություններից է 1935 թ. Բուխարեստում հրատարակված «Հայ արվեստի առարկաներ Ռումինիայում» գործը (Ֆրան-

⁴ Նույն տեղում, էջ 43:

⁵ N. Iorga, Les Arméniens de Roumanie (Patru conferinți despre Armenia) București, 1929, p. 94:

սերեն), ուր ամփոփված են 1934 թ. մայիսին Յորգայի կարգացած դասախոսությունը Փարիզի Մուրատյան վարժարանում: Խոսելով հայ ժողովրդի ավանդապահության մասին՝ Յորգան գրել է. «Չկա որևէ ազգ, որ այնքան վճիռ կերպով պահպանած լինի իր հին ժառանգությունը»⁶, ինչ վերաբերում է հայ մանրանկարչությանը, նա նշում է, որ այն ոչ ֆրանկին, ոչ Բյուզանդիային և ոչ էլ Սիրիային է պարտական և որ ավետարանիչների զեմքերը իրենց վրա կրում են մի բան, որ հատուկ է միայն հային, ինչ վերաբերում է ձեռագրերի նկարազարդումներին և լուսանցազարդերին, հայկականը ավելի ճոխ է համարում, քան բյուզանդականը: Ի վերջո՝ կանգ առնելով փոքրասիական անունով հայտնի գորգերի վրա, Յորգան եզրակացնում էր, որ դրանք իրենց երկրաչափական ոճով միայն հայկական ծագում կարող են ունենալ: Յորգան իրավացի կերպով նկատում էր, որ հայ ժողովրդի պատմությունը հայկական պետականության կործանումից հետո շարունակվել է հայ՝ական գաղթավայրերում, ուստի, նկատում է նա, եթե գրվելու լինի հայերի իսկական պատմությունը, պետք է փնտրել նրան այնտեղ, ուր նա ապրել է, քանի որ մի ազգի պատմությունը սոսկ իր հողի պատմությունը չէ: Նա նկատում էր որ հայկական գաղթավայրերը հետզհետե վեր են ածվել մեկ-մեկ Հայաստանի և որ առանց այդ Հայաստանների ուսումնասիրության հնարավոր չէ գաղափար կազմել հայ հայրենիքի մասին:


Կարևոր են նաև Յորգայի հայագիտական հոդվածներն ու գրախոսությունները, ինչպես նաև հրապարակային զեկուցումները: Ահա դրանցից մի քանիսը. «Թուրքիայի հայերի ջարդը» (1916), «Հայկական հարցը» (1919), «Հայ գրականությունը» (1922), «Հայաստանը, նրա երգերն ու ժողովրդական բանաստեղծությունը» (1925), «Մուղղվայի հայերի ծագման մասին» (1927), «Հայ մի հյուր» (Արշակ Զոպանյանի Ռումինիա կատարած այցելության առթիվ (1932), «1500 տարի Աստվածաշնչի հայերեն թարգմանության առթիվ» (1935), «Հայ ժողովրդի անցյալի և նրա ապագայի մասին» (1935), «Բոստոնի հայկական եկեղեցիների արձանագրությունները» (1925), «Հայ ֆուլկորը» (1933) և այլն:

Նշված աշխատանքներում Յորգան հաճախ է կանգ առել հայ ժողովրդի պատմության և մշակույթի հարցերի վրա: Հատկապես անմոռանալի է Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի առթիվ 1935 թ. Յորգայի արտասանած այն ճառը, ուր նա ասաց. «Այլ ժողովուրդներ էլ տոներ ունեն. սակայն նրանք տոնում են ավելի այլ ազգերի վրա տարած իրենց հաղթանակները, իրենց զենքի հաջողությունները, պատերազմներում շահված փառքը: Այո ժողովուրդներ կան, որոնք բռնության հաղթանակը իրենց պաշտամունք են արել, բայց ի՞նչ գեղեցիկ է, երբ ձեզ նման մի հին և մեծ ժողովուրդ ոչ թե մտածում է իր մղած պատերազմները կամ իր կրած առապանքները տոներ, այլ տոնում է իր հոգեկան նվաճումները»⁷:

Յորգան կարողանում էր ժամանակ գտնել նաև հայ գրականությունը բուրժուականությանը դարձնելու համար, թարգմանել հայ միջնադարյան և ժամանակակից քնարական բանաստեղծության ընտիր հատվածները: Կոստանդին Սրղնկացի, Ֆրիկ, Խաչատուր Կեչառեցի, Հովհ. Թումանյան, Մկրդ-

⁶ N. Iorga, Choses d'art armentennes en Roumanie, Bucarest, 1935, p. 8.

⁷ N. Iorga, 1500 ani de la traducerea Bibliei în armeneește, „Ani“, Revista de cultură armeană, anul II, vol. IV, aprilie-iulie, 1938, p. 14.



տիչ Պեշիկթաշլյան, Վահան Տերյան, Սիպիլ, Վահան Թեքեյան, Անայիս և այլն:

Մեծ թիվ են կազմում Յորգայի այն աշխատությունները, որոնցում ուսումնասիրողը կարող է հարուստ նյութ գտնել՝ կապված հայ ժողովրդի ընդհանուր պատմության տարբեր հարցերի հետ: Ռումինահայերի հետ առնչվող արժեքավոր փաստաթղթեր կան Յորգայի «Ակտեր և պատահիկներ», «Ուսումնասիրություններ և փաստաթղթեր», Հուրմուղաքիի փաստաթղթերի բազմաթիվ հատորներում, «Կալիմաքի գերդաստանի փաստաթղթերում», «Ռումինական և մի քանի հունական ակտեր Բրաշովի արևելյան առևտրի կոմպանիայի արխիվներից» ժողովածուներում:

Հայերի տնտեսական և մշակութային կյանքի հետ աղերս ունեն Յորգայի բազմաթիվ մենագրությունները, ինչպես օրինակ. «Ռումինական ժողովուրդը Բուկովինայում» (1905), «Ավստրիական գրավման մասին 1789—1791 թթ.», «Քիլիայի և Աքքերմանի մասին պատմական ուսումնասիրություններ» (1900), «Ռումինական առևտրի պատմություն» (1915 և 1925), «Առևտուրը և արհեստները ռումինացիների անցյալում» (1906), «Մեր երկրների առևտրական կապերը Լվովի հետ» (1900), «Բոտոշանի առևտրի պատմությունը» (1906) և այլ գործերում: Հայերի և ինչպե՛ս իրենցիկ պատմության հետ են առնչվում «Ֆիլիպ դ' Մեզիեր» (1896), «Նոթեր և քաղվածքներ խաչակիրների պատմության համար» (Ա—Կ հատորներում) և այլն:

Մեր ժողովրդի ազնվագույն բարեկամը մեզ հետ էր միշտ: Ն. Յորգան քաջալերեց «Նավասարդ» գրականության և արվեստի պարբերականի հրատարակումը Բուխարեստում 1923 թ. Հ. Ծ. Սիրունու կողմից, նա հովանավորեց և աշխատակցեց «Անի» ռումիներեն հայագիտական եռամսյա հանդեսին. (խմբագիր-հրատարակիչ Հ. Ծ. Սիրունի): Քիչ չի եղել հայկական այն երեկոների թիվը, որոնց կազմակերպիչն ու զեկուցողը նույն ինքը՝ Յորգան էր: Յորգայի խմբագրության շնորհիվ էր, որ ռումինական «Ունիվերսուլ լիտերար» գրական հանդեսը մի ամբողջ համար նվիրեց հայ գրականությանն ու արվեստին (1925): Յորգայի թելադրությամբ և նրա անմիջական միջամտության շնորհիվ էր, որ ուսումնասիրություններ և դասախոսություններ կարդալու համար Ռումինիա հրավիրվեցին ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլիբը (1923), անվանի բյուզանդագետ պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանը (1929) և ապա նաև հայ մշակույթի մեծ երախտավոր Արշակ Զոպանյանը (1932): Հայ մշակույթի, գրականության և արվեստի շուրջ նրանց կարդացած զեկուցումները վերածվեցին հայ-ռումինական բարեկամության երեկոների: Յորգայի հովանավորության շնորհիվ էր, որ մեծ հաջողություն ունեցավ «Հայ արվեստի ցուցահանդեսը» Բուխարեստում (1930): Յորգան Ռումինահայ կեդրոնական Մատենադարանի» հիմնադրման (1927) ոգեշնչողներից մեկն էր: Նա առաջին նախագահն էր 1930 թ. ստեղծված հայ մշակութային ընկերության, որը հայ և ռումինացի մտավորականության միջև փոխադարձ ճանաչման կարևոր օղակ էր: Անմոռանալի են «Հայկական օրերը» Յորգայի հիմնադրած Վրլեն դե Մունտեի ամառային համալսարանում, ուր կարդացվում էին հայագիտական զեկուցումներ, ելույթներ էր ունենում հայկական պարախումբը, կատարվում էին ընթերցումներ հայ հեղինակներից: Յորգայի շնորհիվ էր, որ իրականացավ ռումինահայ թեմը պետականորեն ճանաչելու կարևոր գործը (1931): Նա բարձր էր գնահատում «Վենետիկի Ս. Ղա-
կոպի» 8—4

զարհայկական ակադեմիայի թղթակից-անդամի» իրեն տրված տիտղոսը՝ Դարձյալ Յորգայի շնորհիվ էր, որ հայերեն լեզուն պիտի ներմուծվեր Հարավ-արևելյան Եվրոպայի ուսումնական կաճառում և ընթացք էր տրվելու հայագիտական ուսումնասիրությունների հրատարակմանը ուսմիական ակադեմիայի ժողովածուներում (պրոֆ. Ն. Ժ. Սիրունու կողմից)։ Յորգայի 60-ամյակի առթիվ արտասահմանյան բազմաթիվ հայկական թերթեր համարներ նվիրեցին հայ ժողովրդի մեծ բարեկամի հոբելյանին։

Յորգան իրեն ջերմորեն կապված էր զգում հայ ժողովրդի ներկայի հետ։ Նոր Հայաստանը նրան ևս ոգևորել էր։ Նա հաճախ կրկնում էր, որ հայը Ռումինիայում կամ Սփյուռքում չպետք է ձուլվի, քանի որ նա արդեն իր երկիրն ունի։ Ռումինն լավ քաղաքացիներ եղեք, բայց մի մոռանաք, որ Դուք կպատկանիք Հայաստանին»⁸ — ասում էր Յորգան հայերին։ Յորգայի միջամտության շնորհիվ էր, որ Վերսալի հայաստան կինոժապավենը 1932 թ. ցուցադրվեց Ռումինիայում։ Յորգան դիտելով այդ կինոժապավենը ասել է. «Ուսանելի շատ բան կա նաև մեզ համար այն ճիգին մեջ, որ հայ ժողովուրդը փորձում է այս դժվար պահին»⁹։ Մի այլ առիթով Ն. Յորգան իր ջերմ մաղթանքն է հղում հայությանը։ «Մաղթում եմ, որ հայ ժողովուրդը խմբվի իր իսկ հայրենիքում՝ երջանկություն գտնելով այնտեղ»¹⁰։ Նա մտադիր էր գրել նաև հայ ժողովրդի ընդարձակ պատմությունը և որի համար անհրաժեշտ ատաղձը հավաքել էր արդեն։ Ողբերգական վախճանը սակայն խանգարեց դրան։ Համայն մարդկության հետ միասին նրա մահը դառնորեն սգաց նաև հայ ժողովուրդը։ Պրոֆ. Ն. Ժ. Սիրունին 1941 թ. «Անի» հայ մշակույթի տարեգիրքը (ուսմիներեն) նվիրեց հայ-ուսմիական բարեկամության մեծ խորհրդանիշ Յորգայի հիշատակին, այդ առթիվ աշխատակցությունն ապահովելով նաև հանգուցյալի հայասեր ընկերների համար։ Հայ ժողովուրդը իր առաջին հրապարակային հարգանքը մատուցեց 1945 թ. նոյեմբերին՝ Յորգայի շարանենդ սպանության 5-րդ տարելիցի առթիվ Բուխարեստի «Հայ մշակույթի տան» սրահում կազմակերպված հուշ-ցերեկություն¹¹։ Տողերիս գրողը այդ առթիվ կարդացած իր «Նիկոլա Յորգան իբրև ուսմիականության պատմագետ» զեկուցումը ավարտում էր հետևյալով. «Նրա հիշատակը միշտ թարմ է մնալու մեր մեջ, երբ պետք լինի խոսել հայ և ուսմին եղբայրական կապերի մասին, նա ներկա է լինելու մեր մեջ երբ պետք լինի պատմելու մեր թափած ճիգն ու եռանդը մարդկության քաղաքակրթության մեջ և դարձյալ Յորգան մեր մեջ է լինելու այլևս գոհ իր մարգարեաշունչ խոսքերով, երբ արժանի լինենք համբուրելու հայրենի հողը ու տեսնելու Արարատն ու նրա կատարներից շողացող արևը...»¹²։

Այսօր հարյուր տարի է անցնում աշխարհահռչակ գիտնականի ու մեր ժողովրդի ազնվագույն բարեկամի ծննդյան օրից։ Նրա պանծալի այս դարա-

8 Ն. Ժ. Սիրունի, Նիկոլա Յորգա (Հայ եկեղեցին ուսմեն հողի վրա աշխատության հետ), էջմիածին, 1966, էջ 194։

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում, էջ 266։

11 Զափեն Արևայն, Հիշատակի հանդես փրոֆ. Ն. Նոոկայի մահվան 5-րդ տարեդարձին, «Պահակ», Բուխարեստ, 1945, 25 դեկտ., էջ 3։

12 Ս. Քուանչյան, Նիկոլա Յորգա, ուսմականության պատմագետ. զեկուցում (անտիպ)։

դարձը համընկնում է այսօր նրա փայփայած մեծ իղձերի՝ մեր հայրենի երկրի
 փերածաղկման և ազգահամալքման իրականացման զույգ մեծագործություն-
 ների հետ:

НИКОЛАЙ ИОРГА И ЕГО ТРУДЫ ПО АРМЕНОВЕДЕНИЮ

С. Э. КОЛАНДЖЯН

Резюме

Исполнилось сто лет со дня рождения Николая Иорги, славного сына румынского народа, незаурядного историка наших дней, крупного арменоведа и искреннего друга армянского народа.

Всю свою жизнь Николай Иорга посвятил изучению всеобщей истории. Особенно значительны его заслуги в становлении и развитии арменоведения в Румынии. Его труды «Армяне и румыны — историческая параллель» (1913 г.), «Четыре лекции об Армении» (1929 г.), «Армяне в Румынии» (1929 г.), «Краткая история Малой Армении — Киликийская Армения» (1930 г.), «Предметы армянского искусства в Румынии» (1935 г.) и другие исследования по арменоведению по сей день являются уникальными.

В дни армянского геноцида Николай Иорга поднял голос протеста против преступлений палачей султанской империи, осуждая безмолвное равнодушие цивилизованных держав Европы к Армянскому вопросу. В дальнейшем, будучи свидетелем возрождения Армении, Иорга переживал огромное чувство вдохновения и обратился с призывом к зарубежным армянам посвятить себя возрожденной родине.